

նին՝ տուաջինը յաւնուար և վետրուար ամիսներից իսկ երկրորդը մնացածների համար, որդ պատճառով տարուայ ցանկի մէջ նահանջները կրկնուած են: Օրինակ 1248 նահանջ թուի եօթներեակն է Գ. և Դ. ուրեմն եթէ պէտք լինի վետրուարի 5-ն իմանալ Գ. զծի վերայ վնատուելով կդանենք, որ չորեքշարթի է, իսկ մարտի 5-ը Դ. զծի վերայ որոնելով՝ կդանենք, որ հինգշարթի է:

Սոր կամ Դրիգորեան տումարը 12 օր տարբերութիւն ունի մեր գործածած Յուլիան տումարից, նոյն ձեռվ կարելի է գործածել և այս տումարը, միայն գորերի թիւը Դրիգորեան տումարի բաժնում՝ պէտք է որոնել, օր, եթէ տարուայ եօթներեակը Յ=Բ. է, նոյն ձեռվ կարող ենք գտնել ցանկացած տարբեթուի որոշ օրը կամ ամսաթիւը: Օրինակ 1643 թ. նոյեմբ, 17-ը ինչ օր եր: Կը գտնենք նախ եօթներեակը Ֆ և ապա նոյեմբերի 17-ը կտեսնենք, որ կիւրակի է:

Մի քանի խօսք ևս բարեփոխութեան մասին: Յայտնի է, որ տարեշրջանը 365, 2422166 .. օր է, որ Յուլիոս կեսար 45 թ. Ք. ա. աստղաբաշխների օգնութեամբ իւր անունվ տումարը ձեւակերպեց, տարին 365^{1/4} օր հաշուելով՝ որով չորս տարին մի օր առելանում, և նահանջ է, անուանում: Բայց այս հաշիւր բոլորովին ճիշգչ, որովհետեւ իւրաքանչիր տարուայ համար 0.0077834 (=365.25 — 365, 2422166 ..) աւելի է հաշուած: Օր 400 տարուայ ընթացքում կինի 3,11336 .. օր, այսինքն իւրաքանչիւր 400 տարին երեք օր կաւելանայ: 1582 թ., Դրիգորեան տումարով կամեցան ուղել այդ սիսար՝ չնչելով՝ առան օրուայ տարբերութիւնը, և որոշեցին իւրաքանչիւր 400 տարուայ մէջ փախանակ 100 նահանջ հաշուելու: 97, հաշուել տարին 365,2425 օր ընդունելով՝ որ դարձեալ բոլորովին ճիշգչ չէ: Այս փաքրիկ տարբերութիւնը 40 դարի ընթացքում՝ մի օր կինից այսինքն 1582—5600, որ նահանջ է, և ուրեմն հարկ կինի կրկնի բարեփոխել Բայց աօմարական շարքի մէջ պէտք է նոյնաձեռւթիւն և կարգաւորութիւն լինի, ընդհանուրին մասշելի և դի, բազործածելի անելու համար: Եթէ բարեփոխումը 5600 թ. լինի՝

գարերի շաբքի մէջ նոյնաձեռւթիւնը կիսանգարութիւն է: Այս հանգամանքը աչքի առաջ ունենալով պ. Հովուեանը հաշուել է, որ 40-րդ դարու վերջը ասարբերութիւնը 17ժ աւելի կինի և քանի որ բարեփոխումը նահանջ տարբին կարելի է անել մի օր պակասեցնելով՝ ուստի նախընտրելի է համարում 40-րդ դարը նահանջ չհամարելու որով 17ժ առաւելութեան անդ միայն 7ժ: պակաս հաշուած կիննենք: Սոյն բարեփոխութիւնը կարելի է անել և 80-րդ դարու վերջը: Այսպիսակ թէ տամարի կանոնաւ որութիւնը չի խանգարութիւն և թէ հաշուը աւելի ճիշգ կինի ժամանակի վերաբերութեամբ:

Բարեփոխման օիւնեակներով ևս կարող ենք գտնել մեր ցանկացած օրը կամ ամսաթիւը: Խնչպէս Յուլիան և Դրիգորեան տումարների սիւնեակներում գտանեք:

9. Վ.



ԶՈՅՆԱԲՈՆՈՒԹԻՒՆ (Lautlehre)

ԱՐԱՅԵՐԵՆ ՀՈՅՆԱԲՈՆԻՑԻՑ ՓՈԽԱՌԵՎՈԼ ԲԱՌԵՐԻ

1.

Արացիների յարաբերութիւնը Հայերի հետ սկսում է շատ հին, մերեւս նախապատմանկան ժամանակներից: Ինչպէս պատմագիրները յայտնի կերպով մկայում են, վրացիները գրեթէ միշտ եղել են Հայկական գերիշխանութեան տակ՝ կազմելով մի առանձին վարչութիւն: և այս մինչև իսկ այն ժամանակը երբ Հայերը հարկառու են եղել օտարներին: Պյասէս Քաղրատունեաց շրջանի մինչև կէսը Հայոց թագաւորները ուզած ժամանակ կարող էին նրանցից վերցնել զօրք և խառնել իրանց սեպհական բանակի հետ: Վրաստանի նախկին քաղաքականութիւնը Հայերից է, քրիստոնէութիւնը Արացիների մէջ որչափ էլ օր անկախ լինէր, բայց և ոյլակէս հայկական եկեղեցու: և Հայոց հայրապետական աթոռու հիտ անձակ կապերով կապուած է եղել: գոնէ մինչև կիւրիուն: սրբ օրով Արացիների բաժնումը հայկական առաքելական եկեղեցուց, արքելք չէ եղել երկու ազգերի քաղաքական յարաբերութիւններին: Վրացիների գիրը հայ Ա. Տեսրոպն է հարել: և թէպէտ գիտունները այս

մասին տարակոյու են յայտնում, բայց իրանք ևս մի հաստատ եղածացութեան չեն հասած. * այնու ամենայնիւ դժուար թէ ստոյգ ըլինի Կորիւնի առանգածը, այն պատմազրի, որ այնպէս լաւ տեղեակ է Վրացիների կեանքին, մինչև համարել զինքը Վրացի կամ գոնէ վրահայ:

Այս յարաբերութիւնների պատճառով բազմաթիւ հայերէն բառեր մտած են վրացերէնի մէջ ալլեալ ժամանակ, Այս փոխառութիւններն եղած են ոչ միայն բնիկ հայերէն, այլ և օտար բառերի նկատմամբ, Խւ արդարեւ Պ բառանը շրջապատռուած լինելով Սև ու Կասպից ծովերից և Կովկասեան Հեռնաշղթայից, հին ժամանակներում նրա յարաբերութիւնները Պարսիկների, Ասորիների, աւելի ուշ Երաբների, Թերեւ նաև Ցոյների հետ հատարուում էին Հայաստանի միջոցով ուստի բնական է ենթադրել թէ այն օտար բառերը՝ որ Վրացիները փոխ են առել Պարսկերէնից, Ասորերէնից, Երաբերէնից և Յունարէնից, գոնէ մեծ մասով փոխառակալ են ուղղակի հայերէնից, Խմ ուսուցիչ հայագէտ պրոֆ. Մէջյէ մտածում է, որ այսպիսի բան անկարելի չէ, և միջոցներ է որոնում հաստատելու այս միջնորդութիւնը, Կմանակէս Միջէլ Ռիարինին՝ Վրացերէն փոխառակ բառերի վերաբեր մի փոքրիկ յօդուածի մէջ թէկ կարեւութիւն չէ տալիս հայերէնի արած ազգեցութեան Վրացերէնի վերայ բայց այնուամենայնիւ ընդունում է թէ Հայաստանը կատարել է «բաւական դորձունեայ, միջնորդի դեր հարաից եկած բոլոր նորութիւնների համար», Իրեւ թէ օտար բառերի միջնորդութեան դեր կատարող լեզուն չէր կարող նաև իր բնիկ բառերը փոխ տալ:

Միջնորդական այս գերի մասին գժուար է մի հզօր փաստ առաջ բերել՝ իրբեւ ապացոյց բոլոր այսպիսի փոխառութիւններին, բայց պէտք է նկատել թէ զրել թէ բոլոր այն բառերը (խօսելով միշտ հին բառերի համար) որ Վրացերէնը Պարսկերէնից, Ասորերէնից ևայլն փոխ է առել, կան նաև

* Տես այս մասին Գալուստ Տէր Մկրտչեանի յօդուածը, Երաբատ 1896, Սեպտ. էջ 430, և Հ. Ցովչ. Թարուսանի ուսումնասիրութիւննը, Բազմացիպ, 1897, Մարտ, էջ 111. սրա արգելոց չէ կարելի համարել այն կէտը որ Վրացի մատենազրութիւնը սկսում է միայն եօթներորդ դարում, մեզանից երկու դար աւելի ուշ, այնպիսի ժամանակ, երբ Վրացի ազգը աւելի յարած էր յօյներին.

1. Le rôle assez actif d'intermédiaire que jouit l'Arménie, pour toute nouveauté venant du Sud. Տես Michel Riabinin, Notes de la léxicographie géorgienne, examen du matériel emprunté. Mémoires de la Société de Linguistique de Paris. 1897, Հատոր Ժ., էջ 12-23.

Հայերէնի մէջ, նաև շատ բառեր որ Հայը վերցրել է օտարներից և իւր ձայնական օրէնքների համեմատ փոփոխութիւնների է ենթարկել, ճիշտ նոյն փոփոխութիւններով զանուառում են վրացերէնի մէջ, օրինակ՝ զմրուխտ, գանձ, անգամանզ, ակառն, անդերձ, բայցին, բազմակ ելն, ելն, վրացերէն զուրմուխտի, զանձի, անդերձի, բայցին, անդամանի, ակառն, անդերձի, բազմակի և լին: Սրանք արդէն բաւական համազիչ փաստեր են:

Կան նաև մի քանի բառեր, որոնց համար գժուար է ասել թէ վրացերէնը Հայերէնից վերցրել է, նոյն իրաւունքով կարելի էր հակառակը պնդել, նկատելով այն կենդանութիւնը՝ որ վրացերէնը ցոյց է տալիս սրանց գործածութեան մէջ, երբեմն էլ ունենալով նրանց արմատը. այս կարգից են երկու և երեք թուականները, վրաց, որի ների, Մինչ, ժիրի, ժուրի, Ազգի, օր, օօր, Լազկերէն, յուր, ժուր, ձուր, Սգան, որի ների, յերսի, երկու, Վրաց, պարտի, ժամանակականից, աւելի, Մինչ, շատի, սումի, Լազ, ժում, յում, Սգան, սեմի, Ինգիլ, սամ՝ երեք, որոնցից յառաջ են եկել Հայկական Հոռի և Սամի ամսանուանները (իբրև երկրորդ և երրորդ ամիս), Կոյնապէս սիսար փարախ, փաղի, վրաց, փարա, հօտ փարելի, փարախ, ցիսվարի, ցիստարի, ոչխար կամ կենդանի, ցիսվելի, շնչաւոր, անտառուն, ցիսվերա, կենանք, սացխուրե, փարախ, մեցխավահ, հօմիւ. լազ, յիուրի, ոչխար, Վրաց, փողիկ, փոցի, Լազ, պուշխա, պուցխա, պուխա, եղունգ, սմբակ ելն:

Այս տեսակ բառերի թիւը շատ փոքր է, Միանգամայն թէ Հայերէնի և թէ վրացերէնի մէջ զանուած բառերի թիւը համապատ է ինը հարիւրի, այս բառերը քաղցուած են 2ուրինօփի Վրացերէն—Ռիաւսերէն—Քրանսերէն ընդարձակ բառարանից (տպ. Պետերուրդ, 1840) և Ուապրոթի Վրացերէն—Քրանսերէն բառզբից (Klaproth, Vocabulaire Géorgien — Français, Paris). Դժբախտաբար մինչև այժմ ոչ մի գիտական աշխատութիւն չէ պատրաստուած այս փոխառեալ բառերի մասին, ոչ մեր ազգային, ոչ վրացի և ոչ ել օտար լեզուաբանների կողմից. մի այսպիսի աշխատութիւն օգտակար է ոչ միայն վրացերէն լեզուի քընուածեան և նրա ազրիւների հետ լաւ ծանօթանալու, այլ և նոյն իսկ հայերէն լեզուի համար, որովհետեւ այս փոխառութիւնների ուսումնասիրութեամբ մենք կարող ենք լուծում գտնել հայ լեզուի հնագոյն հնչիւների, մասնաւորաբար երկրարրառների նկատմամբ մեր ունեցած տարակոյաների նախար:

Երկրորդ, Հայերէն ինչ ինչ բառերի երկրորդական ձեռերը, օրինակ շաղաղ (շաղեղ), աղաղ (աղաղ), նախապետ (նահապետ), որոնք կարելի էր դրաբարների սխալ համարել և տարակուսի նրանց ճշմարիտ գոյութեան մասին, հաստատուած են

երբեմն վրացերէնով, երբ այս տեղ գտնում ենք շալախ՝ վերը, թարախ, ալաջի՝ տեղ, ճանապարհ, նախածի՝ գաւառապետ ձևերը:

Երրորդ. Նոյնը պէտք է կրկնել ուղղագրական տարրերութիւնների համար. օրինակ, քարց կամ քարձ, բէճկամ բէջ, քութան կամ գութան, ջաղլինել կամ ջախնել, ջախջախնել, որոնք ճշգուռմ են վրացերէն խարցի՝ չէկ, կարմրագոյն, թէմ ուս, թիւ կունք, կոնակի ոսկոր, գուրանի գութան, չախներ, բաղինել, զարնել, չախաչուխի՝ աղմուկ, չորինդ բառերով:

Տղրորդ. Վրացերէնը մեզ մատակարարում է երեսունի չափ հայ բառերի մեխութիւնը, տալով նրանց ստոյգ արմատը, երբեմն նաև նրանցից ծագած նոր բառեր, որ մեր մատենագրութեան մէջ չեն անցած, և այսօր ևս կենդանի չեն մեր ժողովրդի բերանում. օրինակ մենք ունինք գանգաչեցուցնել, շղուաբարոյ, ճշմարիտ, սողնակ, շիտակ, տրտունջ, անթեղ ելն բառեր՝ որոնք մեզ համար կամ արմատ են (ինչպէս տրտունջ, անթեղ, ճըշմարիտ) և կամ նրանց արմատը ենթագրում ենք (ինչպէս գանգաչ, շղու, շիտ). սրանց ստոյգ արմատը տալիս են մեզ վրացերէն գանգաչի, շղու, միշտու շվեխիս տրտունջ, անթեղը ելն, հոմանիշները.

Իմ այս յօդուածի նպատակը չէ խօսել բոլոր այս կետերի մասին, ինչ որ շատ երկար կը լինէր, այլ յայտնել այն ձայնական օրէնքները՝ որոնցմով վարուել են վրացիները հայերէն բառեր փոխ առնելիս. Արգէն պատրաստել եմ մի առանձին ուսումնասիրութիւն բոլոր այն բառերի վերայ որ Վրացերէնը, ինչպէս նաև Աւագերէնը, Ասեթերէնը, Մինգրելերէնը, Լազերէնը, Արխազերէնը, վերջապէս Կովկասեան բոլոր մեծ ու փոքր լեզուները վերցրել են < հանուրց հիւ սիհականաց վեհապ ոյնչ լեզուիցը, ինչպէս անցեալ տարի ծանուցել են Արաց Խերիա լրագիրը, Մշակ թիւ 109 և Հանդէս Ամսորեայ նոյեմբիր, Բոլոր այս մանրամանութիւնները լացատրուած կը լինին այնտեղ. բայց դրա հրատարակութիւնը մնում է ապագային:

2.

Հայերէն զրերը վրացերէնի մէջ կրում են հետեւ ձոյնական փոփոխութիւնները:

ԱԱՅԱԱԱՐԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԵԻՆ

Ա.

1. Ան մնում է ա, օրինակ, ապարակի՝ ապարակ, արսիկ՝ ալափ, աւար, որս, ականարի՝ ականատ, ակնատ, ալանձվա՝ իրահրել, աղանձել, ալցարի՝ թեթև, դժգոյն, աղքատ, ամպարավանի՝ հպարտ, ամբարտաւան, արակի՝ առակ, պատմութիւն, արտարի՝

Վրարատ, արդի՝ այժմ իսկոյն, արդ, արձանի՝ մեծքար, արտավարի՝ արտավար, ավազալի՝ աւազակ, բանչարի՝ բանջար, զանցուրի՝ մազափոխութեան ժամանակ առնասունների մազլը, կար, կալ (կամնելու), վահի՝ տուն բնակարան (հայ, վահի), վարշամանդի՝ վարշամակ եւն,

2. Ա լինում է հետեւալ բառերում. փորրումինի՝ իշխան (հայ, փարաւամ), կողինչանի՝ հնգկառկան թոյս մը (հայ, կաղճան), սիկորա՝ անասունների ճակատի վերայ սպիտակ նշան (հայ, նկար), որմանի՝ վախճան, վերջ, ևալորտի՝ մի ծառ (գծուարաւ մեր հնագոյն նարաւ ձևից տեղափոխութեամբ). անպայմի՝ ճամփարակ, լորին՝ լուրիս, Այս վերջի երկու ձևերում ո կարող է առաջին ո տասին հետեւ լով առաջ եկած լինել.

3. Ե լինում է հետեւալ բառերում. ների՝ գարի, խավերդի՝ թաւիչ, թաւշածաղիկ (հայ, խաւարտ), լեշամ՝ լաշակ, կերվա՝ կարել, կերրա՝ կաղ (Աւտիրեն կալա), զերի՝ վերը, խեղութիւն (հայ, զարշ ?), կարմիդի՝ կաղանդ, իսկ չենի, ինչիրի՝ ջնջոց, յաթի կտոր, եթէ չանչիլ ձևից է:

4. Ի լինում է մազալիրի՝ օրինակ, բնագիր (մազաղար), փերկղիկի՝ շրջուն մանրավաճառ (փերկղակ), յորի՝ մի անասուն (վագր). բառերի մէջ վերջի ձևը շատ հաստատ չէ. խկ համեմատութիւնը Զուրինովից է:

5. Ու լինում է ճարտիկի՝ ճուրուկա՝ երիտասարդ, ուհի, լուրիս, պայտ (լամբ), ճիանուրի՝ ջութակ (ջնար) բառերում. այս վերջի ձևը շատ անհաւանական:

6. Մի քանի բառերում ան ջնջուռմ է. այսպէս են՝ ճախրակի՝ պտուտակ (ճախրակ), րարշի՝ բաղարջ, արտի՛՝ առատ, Բագրափոնի՝ յատուկ անուն (Բագրատ), բու, բուփի՝ ջրանցք, փոս (առու), Այս աւելի սովորական է վրացերէնի ինքնուրոյն բարդութիւններում. օր, սադան՝ ծածուկ տեղ (դարձ բառից), ուրնորա՝ խօսակցութիւն (բան), պաեցրոք վէճ, պայքար, նաև մացցինեան ձախ մարդիկի՝ աջ եթէ սոյզ է Զուրինովի համեմատութիւնը,

7. Այս օրէնքի հակառակ մի քանի բառերում ա է աւելանում. մակրանելի՝ մկրատ, կարխա, շիշ (կրխայ), բարզա, բրել, ֆորել, ցրամակ՝ անմշակ երկիր (հայ, ցրմուկ՝ անվարժ անասուն), ալշանա, բոյսի անուն (օշնակ):

Այ երկրաուբառը բառերի վերջում լինում է 1. ա թէ՛ հին և թէ նոր փօխառութիւնների մէջ. օր, նուրիս՝ հրեայ, արտա՝ պարայ, նուրա՝ քուլայ, նուրա՝ քուրայ, փիլրայ, փիլլայ, շուկայ, շուկայ, կարսայ, կարխա՝ շիշ (կրխայ), հարխս՝ հերիսայ, սպաս, ավշանա՝ մի բոյս (օշնակ):

8. Այս այս պարագայում եղել է ի կամ ճընչուել է երկու բառերի մէջ. այն է ծիմծիլի՝ ծնծղայ

և ավշոնի՝ մի բայսի անուն (օճառ): Խոկ միավանկ ձայ բառն աւնինք մարի աւր ձեւերով:

Յ. Վրաց. կուր ընտառ ընդուլի՛ կրեայ համեմատել մեր բառի հետ: Կարծում եմ, մի քիչ բռնի է: Չափական որէնքները շատ անյարձար են. մեր կրեայ ձերն գեմ սպասում էինք վրաց: *կուրիս:

Այ բառի սկզբում չկայ վրացերէն փոխառեալ բառերի մէջ:

Այ բառի միջում տալիս է 1. ալ. սրա օրինակ պահմանի՝ պայման: և պահըրաբ՝ վէճ, պայմար:

2. Ե լինում է մի քանի բառերում՝ որուր ստկայն կասկածելի են. մզելի՝ զայլ. վելի՝ վայր գաշտ գեղ՝ վաղանդ (ըստ Զռ. բնութի հայ, մի * զայդ ձեմից): ձմերի ծայր, վերջ:

3. Ամայի բառը լինում է ամա. խոկ պահմանի՝ պայուսակ ուղղակի իրանեան փոխառութիւն պէտք է լինի:

Այ երկրարրաը բառերի վերջում լինում է.

1. ալ. Օրինակ համբավի՝ համբաւ. հավի՝ նաւ. շարավի՝ շարաւ. թարախ. հաւավի՝ նշանածին ուղարկուած նուէր, հալաւ.

2. ալ. Օրինակ. խառ՝ բուրդի խառ. որից խափիսի՝ խառու. գիրան՝ գրաւ:

Բառի միջում ձայնաւորի մօտ լինում է 1. ալ. Դավիր. Դաւիթ. խավերի՝ թաւիշ, թաւշանադի՛ (խաւար): աւալավի՝ տաղաւար. խավիծի՝ կուրագով պատրաստուած խմբեցն (խաւիծ): Խոկ րդալիի՝ մայիշ՝ բառաշել, վրավի՝ պռաւլ, մնչել՝ հայերէն գու. բաւել ձեխց չե: ալ ընդհակառակը:

2. Թաւ ու լինում է վրաց. գուտիր՝ ցեղ, տեսակ, ընտանիք բառում. հմման հայ, զաւա:

Բառի մէջ բաղաձայնի մօտ լինում է:

1. ալ. Օրինակ. բաֆրի՝ բօժ. բավշանի՝ ջրան ջօշան:

2. ա. Օրինակ. դրոշ՝ դրոշ, դրօշակ շրի՝ երկար հաց, չօժ. նշիկի՝ միամեայ բօժ (բօշ). ձանի: ձանիմի՝ զլորող ամոռա: օրօրոց, ձանինամի՝ ձախուրակ (ձան, ձանակակ): բայց՝ կոշիկ՝ ոյշա՝ բաղեղ (օյօշ) Աւերջնմեն բառը զուտ պարսկերէն է: Թերեւս նաև առան՝ արօր:

Բառի սկզբում առիխ է ձայնաւորի մօտ:

1. Ալ. օրինակ. ախարի՝ աւար, սրա, կողապուտ. տիկի՝ մոխիր: աւելուք: ավագակի՝ մատզամա՝ աւագան: ավախու՝ արտասանութիւն (հայ, աւախ կամ աւախ. համատուում է վերջնիր):

Բաղաձայնի մօտ. 1. ալ. Օր. ավշարա: ավշարավի՝ օշարակ. ավշամա: ավշումի՝ օշայ: 2. ա. ոդի՝ ոդ (անշուշտ համին ոի պատճառուոց): ոյշա՝ բառ դեղ (օյօդ):

Այս երեք գիրելորի համար ունինք մի օրինակ՝ օրի մէջ ալ լինում է ար. սրանք են. ախագան կամ արտզան: ավագան: ավախու՝ աւախան, կոկարի՝ կաքաւ. բայց այս երեքն ևս օտար են,

անտջինը պարսկերէնից և միւս երկուաը յաւարենից փոխառութիւն:

Ե.

Ե բառերի սկզբում՝ հազուագեա է. եղած օրինակները ունեն զանազան ձևեր. 1. և ունեն եղող՝ տանիք, երգիք և նեկամիք, յատուկ անունը, ենէ ուկի՛ վայրի ելակ բառն էլ մեր բառին հետ կապ ունի: այս տեղ ևս և մնացել է. 2. և ջընջուկը է Բախսի՝ Երասմի և րելի՛ ձայն, եղանակ (իրգ?) բառերում. 3. Այ վերածուել է Արկի՛ Երաքս, Երասմի և այրդի՝ գալար կանաչ խոս (Եղբրդ) բառ երում:

Ե բառի մէջ լինում է 1. և. օր. վերեզեկի՝ փերեզակ, եշմակ՝ հեշմակ. Անիօնի՝ նեխ, մակուտնելու՝ ձակնզեղ. արեկի՝ արեթ. դեսպանի՝ գեսպան. այլրուի՝ աղերս. զիշերի՝ սև ասմե, գիշեր (ոմիք). Անիսպեկի՝ գաւառապետ (Անիսապետ). Ծիրու՝ խէժ: իշակնելիք (ծեփ): Ծիծա՝ կանեփը ծեծել. րիրու թեփ:

2. ա է լինում հետևեալ բառերի մէջ. աւասկի՝ Ճերմակ մազ, բալան թեղի, հաւիսան հերիսայ:

3. ի է լինում հետևեալ բառերում. սիսի՝ կարծը մեծ քար (սկա), միշի՝ տեղի? խիմիտիրի՝ խեշըրանք, իսկ միխակի՝ մեխակ պարսկական է:

4. Զնջուում է ալի՛ աւելուք: աղը. և ըզմա: վրիսի՝ վերջ բառերում:

5. Ո եղած է հետևելով յաջորդին ձողորդին ձեղուակի ձեղանակ բառում:

Եւ այս երկրարրաները լինում են իս. Օրինակ. մախան՝ մատեան. վարիս՝ վառեակ, մանիսակ՝ մանեակ. հուրիս՝ հրեայ:

Այսպէս եղել է նաև հայ. Անիուր վրաց. Անիուրի՝ որ թերեւս ենթապուում է մի * նեախու ձև:

Անիուրի լինում է վրաց. Անիուրի:

Ե.

Ե գրի համար վրացիները չունին առանձին նշան. սրա փոխարէ: գործածում են և. օրինակ. ծիսի՝ ծէս. պանելույն՝ պատճէն, պաճէն. պանիյ՝ պատճէշ. զիսի՝ գէտ խննէշի՝ գէտ նեխուն (խննէշ). վեզի՝ վէգ. եւերէյ՝ հայ քահանայ, տէրտէր. շնի՛ շէն:

Բառերի վերջում ունինք զնի՝ ուժ, զորութիւն միջոց. հայ, զնի. (Համեմատութիւնը Զորինովից է). բազի՝ բազէ. ուր ե-ի:

և ջնջուել է դմի՝ գեպ, գեմ բառում, իսկ այս է վերածուել բաշի՝ առասպելական ձի (նրկ 2?) բառում, եթե այս համեմատութիւններն ուղիղ են:

Է.

Ը Գիրը բառի սկզբում երեսում է միայն ընկոյզ՝ վրաց. նիզողի բառի մէջ. բայց այս բառի պայմանները այնպէս անորոշ են, որ լաւագոյն է խօսել առանձին ուսումնասիրութեան մեջ:

Ը բառի մէջ չէ գրուում. բայց վրացերէնը այս պարագայում շատ անգամ նշանակում է ի կամ ու: Այսուեղ ծագում է մի շատ կարելոր հարց. Յայտնի է թէ Հայ լեզուն բառի անշեշտ վանկերում գտնուած ի և ու տառերից չէ ախորժում. ժամանակին դոյութիւն ունեցել են սրանք, բայց յետոյ ջնջուել են, ոչ միայն բնիկ հայերէն, այլ և օտար լեզուներից հայերէնի անցած բառերում. Արա օրինակ են ծփլիս տիլիսի՝ որ ցոյց է տալիս հայերէնի հնագոյն ձեւը* ծփլիս. պահէ. վիճակու նիկուր, հայ. վիճակ, բայց հնագոյն * վիճակ նիկար. բա զուպան՝ բազպան=բազուպան: Բնիկ հայերէն բառերում. նկուր, կիլ=*կուլի, եղիս, Սանս. վիճակի, բայց դանին, զիի=*զիսանին, զիի և լու, Արդ՝ արդեօք վրացերէնը իր կողմից աւելացրել է այդ ի և ու տառերը, թէ փոխ առել է այնպիսի ժամանակի, երբ գեռ հայերէնում նրանք ընկած չեն: Պրօֆ. Մէջյէ այս վերջին կարծիքին է և լնդուում է թէ վրացերէն այս յարդի բառերը մեզ ներկայացնում են հայերէնի Քրիստոսից վ.րշ Բ. դարի վիճակը. որովհետեւ սղյն գիտականի հաշուով ի և ու գրերի ջնջման օրէնքը ծագել է Բ. դարում: Իսկ պրօֆ. Հերթշման լնդհակառակն է լնդուում: Նա առում է. «վրացերէնը շատ զարմանալի է թւում. Նա բոլորովին կամայաբար իւր փոխ առած բառերի մի քանիսի ծայրից կտրում է, իսկ միւսների վերայ պյօպէս ի կամ ու աւելացնում. ինչպէս մեշտու մեշտայիշ՝ ծշմարիտ. ավշարա, ավշարակի՝ օշարակ և լու. Ես կարծում եմ որ վրացերէնը չունենալով ը ձայնը, զայն ներկայացնում է ի-ով կամ ու-ով: Սա անշուշտ գիտական պատասխան չէ. ոչ մի լեզու կամայաբար չէ վարուում իր փոխութիւնների հետ. գժուար է ընդունել թէ մի լեզու որ սովոր է ծայրերից կտրել, միւս կողմից սովոր լինի նաև աւելացնել. վրացերէնը չեշտից էլ չէ վախենում, մանաւանդ որ հայերէնն էլ շեշտ չունի, որ մի այսպիսի կրծատում հաւանական համարուի. ինչպէս վերն էլ առուած է, մեշտու չէ բնաւ վրացի կրծատում, այլ բնիկ հայերէն և արմատ հայերէնի, ինչ որ շատ պարզ կը լինի, եթե համեմատենք ձգրիս բառի հետ՝ որ նոյն ձեռք կազմուած է: Իսկ զալով ավշարա, ավշարակի ձեւին, սա վրացերէնում որոշ կանոն է. ամէն անգամ որ մի բառ

վերջանում է ակ մասնիկով, այդ ակ-ը կարող է ջընդուիլ. օրինակ. բագմա, բագմակի՝ բագմակ, սպիտակի՝ սպիտակ և լու շատ հասկանալի է. վրացերէնն ունենալով մի նուազական ակ մասնիկ, կարծում է թէ սրանք էլ նուազական են, ուստի և ջնջում է նուազական մասնիկը:

Պիտի նշատել նաև որ եթէ վրացերէնը ի և ու տառերով մեր լ-ն ներկայացնում է. ինչի՞ այդ միայն մի քանի բառերի մէջ է անում, իսկ միւսների մէջ լ-ն ազատ է թաղնում. Օրինակ. զնումի, զմիրի՝ զմեր (ուկ), գրիվի՝ գրիւ, դրամ՝ դրոշա, գրօս, զվարակի՝ զուարակի, խրամ՝ խրամ, մոկրիկ՝ ըմբից (կուի), խրադակի՝ անասուն (հպատակ ??), բարտակի՝ հրովարտակ, մարտի՝ մրագ, շոր՝ խենթ (շղուարարց), շփորի՝ շփոթ, պտուի՝ պտուղ, տամակի՝ տրմուղ, տրավինավակ՝ տրավունջ, փշատի՝ փշատ:

Դարձեալ եթէ վրացերէնը լ-ի տեղ ի և ու է գնում, չպէտք էր մի անգամ ի և մի ուրիշ անգամ ու գնել անկանոն կերպով, այլ միայն ու կամ միայն ի որոշ զիրբում: Այժմ յայները, հրէաները և կովկասեան լազերն էլ թուրբերէնից բառեր փոխ առնելիս լ-ի տեղ գնում են ի կամ ու: բայց բոլորովին որոշ կերպով, և ոչ այնպէս անկանոն:

Ուրեմն պէտք է ասել թէ սպր. Մէջյէ ի կարծիքը, որը յայտնած է Revue critique-ում (թարգմ. Բաղմակից 1898 մարտ, էջ 118), բոլորովին ուղիղ է, բացի մի կետից այն է երբ յաջորդ վանկում արդէն ու կայ, օրինակ կրմուի, մարուի, ծծումը և լու. սրանց մէջ կարելի է որ առաջին վանկի ու-ն հետևութիւն լինի երկրորդին. Խնչպէս այժմ՝ պօլսեցների, մէջ առուում է, պուտուղ ուրուցնեալու, փիս, պտուղ, ուղմը, թռչունը. հմմա. վրաց. կուրմուի, մուտրուկի, ծումումա և լու. Բայց այս ևս միայն կասկածական է, և ոչ բոլորովին հաստատ:

Այսուեղ գնում եմ այս շատ յարգի բառերի ամբողջական ցուցակը:

1.-ի աւելացրած բառեր.

— զիրան՝ զրաւ. զիրվանիշ՝ զրուան. ծննծիլի՝ ծնծզա. կուլինչանի՝ կաղնչան միմուրի՝ ծմուռ (գւռ). միմարի՝ նժար. նիկուր. նիանդի՝ նշանդ. սիլինմի՝ պղինձ. սիկուրա՛ տէճոր (վրաց. սիկի՝ տէկ ձևից). վինիրի՝ վինթի (գւռ). բուրիմա, քուրմ. միմուրի՝ նմոյշ:

— Այս ի և ետոյ և-ի վերածուած.

մեշտու, մեշտայիշ՝ ծշմարիտ, կերա, կերակի, կերականի՝ կրակ:

2.-ի աւելցուած բառեր.

Ու առանձին. — մուշակի՝ մշակ. նուրիս. հրեայ. ուրակարական՝ հրապարակաւ. մակունինելա՝ ծալնեցեղ. կուշարակի՝ կշտարան. ուրտփա՝ սիրելի (տռփ-տռփ-արմատից). փուշվա, փշրել, փլցնել (փշ-փշր-արմատից):

Հետեւորդ ու-ով. — մուտրուկի՝ մարուկ. ծում-

ծումա՝ ծծումբ. յուրոքը՝ քթիթ. խումումա՝ խառնակ, խճուճեալ. փուցումբա՝ փցուն, զուղուղի՝ կղաւանել, կառուտ, յուրիսմա՝ քրպում. կուրմախ, կղմուխ. չուրդուշի՝ ջրմուգ, զունդուկի՝ կնդրուկ, զուրմուխի, զմրուխա. րուրուրը բոյս որի տերմները փոշեացնելով գործածում են իրբւ քացախ (բրու). մուրմուրի՝ մրմառ. բուծուծի՝ խծուծ ?

Ե

Ի բառը մնում է 1.ի. Օրինակ. բառի մէջ. յիրի՝ չիր. նախիր՝ նախիր. սասիկի՝ սաստիկ. պիդի՝ պիդ. ծաղիկ՝ ծաղիկ. տիկին. յամիլի՝ չամիչ. ուսիմագի՝ սասիկան. շիրիմի՝ շրիմ. կարիծի՝ կապիճ. ուգիմի՝ բացին. գատիկի՝ զատիկ. խարխիսի՝ խարխսի. խիսի՝ խիստ. իրիք՝ լիրբ. խիմի՝ խիճ. դաշիճի՝ գահիճ. ինման՝ գինձ. զիմի՝ զիժ. մարխիլի՝ բալխիր. բաղինչու բալղինջ. բիծի՝ բիծ. ամրինի՝ ամրին:

Բառի սկզբում կայ միայն իր, իրեւ, որի մասին միքիչ յետոյ :

Բառի վերջում. համի՝ հանի. նորի՝ զարի. սամանի՝ ծղանի. բարդի՝ բարտի. յորի՝ ջորի. սոճի՝ սոճի. փիմի՝ փնմի. մժիմի՝ տեղի. եկի՝ խեցի. շինի՝ գինի. սամի՝ սահմի. եւրի՝ հոռի:

2. Լինում է և պետակի կամ պիտակի՝ պիտակ. պիլենճի՝ պղինճ. սպետակի՝ սպիտակ (պահլաւերէնից). վեշտի՝ վիշտի. վերազի՝ վիրազ. ծիմի՝ ծիլ. ծերվան՝ ծիր. արկարի՝ արիզար. մերամի՝ ծիրան. շվիմի՝ շիտակ. ինչպէս և վելունի կամ վիշնի՝ վիլն. Խվարեշան՝ Խորիշան (յտ. անուն)՝ որոնք սակայն մեզնից չեն:

3. Ու լինում է չետեեալ բառերում. խուսի կամ խիսի՝ խիստ. փունն՝ փին. միտ՝ կամ մուտ ձձի:

4. Կ բառերի ծայրում բացի կանոնաւոր ձեից, առնում է նաև մի քանի անորոշ ձեեր. օր. րիւան թեղի. բարս բաշխան՝ թազիք. բախս՝ բեր ? ուհան՝ զլիք ?

5. Կրումա՝ յապուշ կրթել բառի մեջ ի տառի անկումը բնիկ վրացի բարդութեան օրէնքի համեմատ է:

Կ երկրաբառը բառի վերջ լինում է իր դրիմի՝ զրիւ. արծիմի՝ արծիւ. պատիմի՝ պատիւ. մոկրիմի՝ ըմբիշ (կորի):

Բառի մէջ (բարաձայնի քով միայն օրինակ ունինք) յօվ, եօվ, ու, ի. նիվիր՝ նիւթ. րեվի՛ րիւր (հնագոյն րեւր). յուր՝ շիւր. խուլան՝ հիւզ. պիվիւ. աղիմիյի՝ գիւրին. և յտ. անուն նրիմի՝ հայ, Արձիլ Երձիւզ.

Ո.

Ո բառի մէջ մնում է - 1. ո. Օր. ամրիմի՝ ամրում. բաղի՝ բոզ. բոկինի՝ լուրիս (հայ. բոկեր ?) բորոկի՝ բոզկ. բոսում. բորբովի՝ բորբոք. բորոքի՝ բորոտ. գալատովի՝ գալատոսու. գումի՝ գոմ. գոնի՝ գոնջ. զուրովի՝ գոռով. դորակի՝ դորակ. զորվան՝ զորվանի՝ խորշակի՝ խորշակ. խոց՝ խոց. խոփի՝ խոփ. զողովի՝ կողմազ. կոկոն՝ կոկոն. կոմ՝ կոկոնի. կոկոն. կոմակի՝ կոմակ. կոմի՝ կոմզ. կոմիք. կոմս ? կոպտոնի՝ կոպտոն. կոտոշի՝ կոտոշ. կոտորի՝ կոտոր. կորդի՝ կորդ. կործիալերս՝ կործանում. մորի՝ մօրչ. պոպի՝ յօպոպ. շմորի՝ շմոր. շփորի՝ շփոմ. պոփ. պոչ. յոզի՝ ջոկ. յորի՝ ջորի. սոճի՝ շոճի. սորուն՝ սորուն. տոհմի՝ տոհմ. տող՝ տող. ցոփի՝ ցոփ. փոլորդի՝ փոլորդ. փոսու. փուրի՝ փոր. ծակ՝ յարիմա՝ ծակում:

2. Երբեմն լինում է ու. խոշորի կամ խոշորի՝ խոչօր. դորակի կամ դորակի՝ գորակ. փուղի՝ փող, շեփոր? փուղի՝ փող, գրամ (պրու.). դուրի՛ կործ. ծուրի՞ ծորել. խորվիրս՝ խորվել. կուկուրի կոկոն կամ կոկոն բառից. իսկ տառուցի՝ կասկածական :

3. Ա չետեեալ բառերում. նոճի՝ նոճի. նոպակի՝ նոպան. կոծախուրի՝ կոծախուր. (Եթէ հայերէնը վրացերէնից չէ վերցրած և իր օրէնքներին յարմարցրած. հման մեքենայ, մեղեղի). զամեչի գոմէշ. Էսկ վրաց. ավազակի կամ յաւազ (յովազ) ձեից և կամ ուղարկի պարսկերէնից :

4. Ցոլ բառը եղել է ցիայի՝ ամպերում ցոլացում :

5. Ո երբեմն աւելանում է բառերում. որովի՝ որր. բորովի՝ բոզկ. թեկներնի՝ թեկն. ավշոնի՝ օշնայ:

Ո բառերի սկզբում 1. ո. սապի՝ սոպ. սափի՝ սափիկան. որովի՝ որր. որման՝ որմ. 2. ջընչուել է յան սատ բառում :

Ով ի համար երկու օրինակ միայն կայ. բառակի՝ հրավարտակ. զալի՝ համաձայնութիւն, հաշտութիւն. թերեւս հայ. զովողի. Խոկ յովազ եղած է ավազ:

Ոյ երկրաբառը բառերի սկզբում չկայ. իսկ բառերի վերջը միայն վրաց. սարու. սարու:

Կ եւ այս մասը յուսաչափել է մեր երկրացիւ Զ եւ Զ ձեւերի նախուրինից: Խոր, Գ. Կ. Ուր երկու բառազնին վարդապետաց եւ հաստատույնին յան զամեմայնի աշուկենալուն. առ որով մաւեմակաւ Արձիլ ունն եւ կուցեալ բարացու վրաց (կորիւ օր. առ որով Արձիլ ունն կացեալ բարացու վրաց); եսկ Կորինի մօս (կը 20) այս պիսի և Առ որով մաւեմակաւ Արձիլ ունն բարաց ուրեմ վրաց:

4. Վարցերէն բառից երեսում է ու մեր ձեւը սիսու

Բառերի միջաւմ՝ կրում է հետեւել փոփոխութիւնները.

1. Առ. պատուի՝ պատրայք. սամուրի՝ սամոյր. դուսի՝ կոյս. տակուիկ՝ թակոյկ. տարակուակ՝ տարակոյս? (2ուր.) • աղբազունի՝ տարագոյն. զունի՝ զոյն. մակուկու մակոյկ (շատ կասկածական). նիմուշի՝ նմոյշ:

2. Առ. ամրուի՝ համբոյր. զոյի՝ զոյդ. միզոյի՝ լնկոյդ:

3. Այս ուեւ վիւ խոյրիս խոյրի՝ խոյր. կապուտի՝ կապոյտ. զիլինի՝ զոյն:

Ու սկզբում մնում է ու. օր. ուրա՞ ուռն, մուրճ. ունի՞ ունջ. ուռնախ՝ ուռնուլ? (վերջի երկուըը 2ուրինովից):

Ու բառերի վերջը նմանապէս. ձո՞ւ ձու? բո՞ւ բու՞ առու:

Ու բառերի մէջ բաղաձայնի քով. 1. մնում է ու առ հասարակ. օրինակ. խախուտի՝ խախուտ. բուծի՝ բուծ. տապուժակի՝ տապուժակ. զորի՝ զորմատուրի՝ մատուռ. բուրդի՝ բուրդ. խուփի՝ խուփ. հումի՝ հում. մունչի՝ մունչ. շամփուրի՝ շամփուր. շումի՝ շում. պտուի՝ պտուղ. մուրի՝ մուր. լուծի՝ լուծ. զուզի՝ զուզ. լուրջի՝ լուրջ. բունի՝ բուն. սկորամ՝ ակում. ակումի՝ ակումք. դանդարուիկ՝ դալուկ:

2. Հետեւել բառերի մէջ լինում է ու շրջանի՝ շրջան. կանիսի՝ կանուխ. պայիսի՝ պայուխտ. պատամի՝ պատուհան. մածոնի՝ մածուն. մզոսակի՝ գուսան. լորին՝ լուրիա. մանձի՝ ձունձ. սկուն. սկուրամ՝ ակում. ակումի՝ ակումք. դանդարուիկ՝

3. Ա. տամալի՝ տրմուղ բասի մէջ:

4. Արտցերէնի օրէնքներին համաձայն ջընջուել է միսին՝ մուխ. սրիսի՝ սուրալ բառերում: Ու ձայնաւորի քով. 1. ով. օր. շատրովակի՝ հիւսուածք (հմմտ. հայ. շատրուակ՝ ծածկոց). նովազի՝ նուագ. գառլովիրա՛ աղուանալ, անուշ համ առնել. 2. Վ. զվարակի կամ զուարակի՝ զուարակ. զիրվանի՝ զրուան:

Առանձին պէտք է խօսել բարձմանուիկ՝ բարձուեներակ. մատրակլից՝ մատուռակ. խւեխ. խիւեխ. խուել բառերի վերայ:

(Կը շարունակուի)

Հրաշեայ Յ. Անառեան.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

1900 բուականի համաշխարհային հանդիսի տիկիւականի համատեսիլ պատիւրը: Փարիզի հանդիսի հրաշլիքների մէջ անշուշտ զիսաւոր տեղ կը բունի տիւնիզերի պանորամը. երկամուղով գէպի նրիսեան դաշտը եկող հանդիսատեսների աչքին նախ և

առաջ կերեւայ մի վիթխարի շէնք՝ ահազին աշխարհացոյց զնոտի ձեռվ և 50 մետր տրամագծով: Այս լազմահամակ զանգուածը նստած կը լինի չորեքշուսի խարսխի (մեքենավիթի) վերայ: որ նոյնպէս հաստատուած կը լինի չորս քանդակագործ սիւների և 25 մետր երկարութեամբ կամարների վերայ:

Այդ հսկայական գունտը կը ձեւացնէ տիեզերք. գա կատարեալ կերպով կը պատկերացնէ երկնակամարը իւր անթիւ աստղերով, իւր խորհրդաւոր յարաշարժ աշխարհներով: Տերեկը գա մի երկնակապօյտ մեծահրաշ զնտի տեսիլ կունենայ, իսկ գիշերը՝ մութը իջնելու ժամանակ՝ յանկարծ կը վառուի անթիւ ճրագներով և կը ստանայ գիշերուայ սիրուն երկնիքի տեսք՝ իւր ցիրուցան չողջողուն աստղերով և հոյակապ աստեղատուններով—իրանց ծշգրիտ հեռաւորութեանց մէջ. Մեր՝ նովիթի չորս ծայրերում կանգնեցուցած են Երամազգ (Առւսնթագ), Կոռնոս (Երկեակ), Աւրանոս և Պիսիդոն աստուածների անդրիներ, որոնցից իւրաքանչիւրն իւր մոլորակն է պահպանում: Երաքանչիւր մոլորակի չափը ծիշտ համեմատ պէտք է լինի այդ ամբողջ զնտի մեծութեան: որ միւնոյն ժամանակ արեգակի չափն է ներկայացնում: Խւ որովհետև կինդրոնական զնտի տրամագիծն է 50 մետր, Լուսունթագինը կը լինի—4մ. 91, Երկեակինը—3մ. 18, Աւրանոսինը—1մ. 18 և Պիսիդոնինը—1մ. 94. Այսպէս նաև ուրիշ բազմաթիւ ուսուումնական տեղեկութիւններ են տրվում՝ կամ ծիշտ համեմատական ձեւերով և կամ լոկ նշանացի կերպով, այսինքն տախտակներով և ծանուցագիր պիտակներով:

Բացի ուսուումնական շահագրգութիւնից, համատեսիլ պատկերը պյլեալ հրապոյրներ են ունի, զոր օր. գուք կարող էք պտուտածն երկամուղիով բարձրանալ երկնագնտի շուրջ մինչև վիրին զագաթը և այնտեղից մի հայեացքով տեսնել ամբողջ հորիզոնը: Ա, երեւլքը այնպէս ճարտարութեամբ է յարմարեցուցած, որ երկամուղու կառքերը առ ի շեղ չեն մղվում: այլ միշտ հորիզոնական գիրք են պահպանում:

Գնտի ներսը կը տեղաւորուի Ֆլամմարիոնի աստղաբաշխական թանգարանը. Այստեղ կը գտնէք ամբողջ պատմութիւն, թէ ինչ ջանքերով մորգս հետզետե աշխարհակալութիւններ է գործել երկնային կամարում. սկսած մեր նախահայրերի գաղափարներից՝ մինչև նորագոյն զարմանասքանչ զիւտերը—բոլորը կիմանաք, երկնքի հրաշալիքները, աչքին հազիւ նշամարելի աստղիկները կը հանդիսանան ձեր առաջ ապշեցուցիչ ծշգութեամբ, և այն բոլոր նորհրդաւոր և հեռաւոր երկնակամար տիեզերք՝ կարծես թէ կիջնի, որպէս զի գուք տեսնէք և հասկանաք, թէ այդ բոլոր ջոկ ջոկ մասերը՝ ինչպիսի կատարելութեամբ ի մի են միանում: Աշխարհացոյցերի, կաղապարների, երկնագնտերի, լուսա-